



## 29. ՔՈՍԵՆ, ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ

Կըլնի, շիլնի մի թագավոր: Էդ թագավորը կունենա թաք էրկու տղա, էլ զադ չէ: Օրեն մի օրը էդ թագավորը իրա տղեքանցը, իրա նազիր-վեղրին կկանչի, կասի.— Զեզ էլ ա այան, ասսաւն էլ, որ հա' լ-հա' լս զնացել ա, վա' լ-վա' լս ա մնացե, աջալս էկել ա, պտի մեռնեմ, էկե'ք բանի սազ ու կենդանի եմ, իմ ձեռովը կտակս անեմ: Իմ սազ թագավորությունը,—կասի,—տալիս եմ մենծ տղիս, մի Արլոր ու մի Կատու ունեմ, էն էլ տալիս եմ պուճուր տղիս:

Կասի ու ֆողին կտա: Կտանեն թագավորին առոք-փառոք, ոնց որ կարգն ա, կթաղեն, կթողան կդան: Էդ մենծ տղին կշինեն թագավոր, կնստացնեն թախտին, որ հոր երկիրը կառավարի<sup>1</sup>: Անց կկնա բունց մի բանի վախտ. օրեն մի օրը պուճուր աղպերը կդա մենծ աղպոր կուշտը:

— Ա՛յ աղպեր,— կասի,— բոլ ա ինչքամ քու ումուղին մնացի, մեր հերը ոնց որ կտակ<sup>2</sup> ա արե, բե' իմ փայը տո՛ւ, էթամ իմ բանին:

— Ա՛յ աղպեր,— կասի մենծ աղպերը,— շատ էլ մեր հերը բանց կտակ ա արե, ինչ անենք. դու ա՛րի դոքիդ քարը վե՛ր

<sup>1</sup> Դրառման ձեռագրում բանահավաքը այս բառն ուղղել է, դարձրել՝ յուլա տանի (Մ. 1.):

<sup>2</sup> Դրառման ձեռագրում բանահավաքը այս բառն ուղղել է, դարձրել՝ վասիար (Մ. 4.):

ածա, ըտենց բան մի՛ անի, արի՛ իմ կշտին կա՛ց, մեր հոր եր-  
կիրը յոլա տանենք, քանի սաղ ու կենդանի ենք. իրար հեննա զըլի-  
ներս դինջ ապրինք:

— Զէ՛, որ չէ՛.— կասի պոմուր աղպերը,— մեր հոր վասիաթը  
ես գետինը շեմ քցի. պտի էթամ, որ պտի էթամ:

Մենծ աղպերը, որ տենում ա էլ ուրիշ ճար չկա, բերում ա պու-  
մուր աղպոր փայը տալիս ա, հեննեն մնաս բարով ասում, ճամփու  
դնում:

Պումուր աղպերն ա՝ Աքլորն ու Կատում վեր ա ունում մի ճամ-  
փա բռնում, էթում: էթում ա, էթում ա, չատն ու քիչն  
աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շա-  
բաթ, մախլասի՛ մի ամիս. հասնում ա մի գեղ: էդ գեղի գլխին  
սրան մի Քոսա ա ուստ գալի:

— Բա՛րով, թագա՛վորի ցեղ, — ասում ա Քոսեն, — էդ ո՞ր խա-  
յիցն ա մեր գեղն ես էկե:

— Ա՛սսու բարին, Քոսա աղպեր, էթում եմ դարրություն,—  
ասում ա թագավորի տղեն:

— Բաս որ ըտե՛նց ա, ա՛րի էթանք մեր տունը դոնաղ, մի քիչ  
հաց-մաց կուտես, կդինջանաս, էլ եդ վե կկենաս, կէթաս քու  
ճամփեն:

Թագավորի տղեն աղաք շեմ ու շում արեց, թե՛ չէ՛, շեմ գա,  
համա տեհավ Քոսեն շատ ա զոռում, դեմ ընկնում, վերջը կակ-  
դում ա<sup>1</sup>:

— Լա՛վ, — ասեց, — որ ասում ես, էթանք:

Վեր ա կեննում Քոսի հեննա գալի նրանց տունը: Զունքի Քոսեն  
իմաստուն ա ըլնում, ալրիալը իմանում ա ի՛նչ հունար կա թագա-  
վորի տղի Աքլորի միջին. միտք ա անում, բալի մի ֆանգով նրա  
Աքլորը մորթել տա, միջի թլիսմք վեր ունի, իրան պահի:

Տղին դրաղ ա կանչում, ասում. — Տե՛ս, ա՛յ որդի, հացի վրեն  
ես քեզ մի մհանով կծեծեմ, ի՛նչ անենք, շանենք՝ ձենդ շես կտրի,  
ընչանք մեր դոնաղի աբրորը շմորթեն, իմացա՞ր:

— Լա՛վ, — ասում ա, տղեն — ոնց ասացիր՝ ընենց էլ կանեմ:  
Եննա Քոսեն կանչում ա կնկանը. — Ա՛յ կնիկ, — ասում ա, —

<sup>1</sup> Գրառման ձեռագրում բանահավաքի ձեռքով այս արտահայտությունը  
շնչված է, վերականգնում ենք (Ս. Կ.):

թե՛ղ արա հացի թադարենք տես, մընք էլ ենք սոված, մեր զոնաղն էլ. խեղճը շատ ճամփա ա էկե՞ բեզարած կըլնի, հաց ուտենք, որ մի թիլ դինչանա, մե՞ղք ա:

Կնիկը սուփրեն<sup>1</sup> բերում ա քցում, հացից-մացից, մածնից-զագից, ինչ կա, չկա տանը՝ բերում ա սուփրի վրեն շարոտում: Նստում են հացի:

Ուտելու վախտը Թոսի տղեն մածունը ղաստի հա՛ վեր ա ունում, լղողում դոշին, հա՛ վեր ունում, լղողում դոշին: Թոսեն էս որ չի տենում, վեր ա կենում տեղիցը, ա՛ռ հա մի սիլլա՝ տղի էրեսին. ո՛ր չի տալի, թիլ ա մնում աշրի պեծը թոյի: Տղեն, որ գիտար բանը ընչումն ա, սիլլի վրեն մի զռո՛ց ա քոքում, մի զռո՛ց ա քոքում, որ աստած հեռու տանի: Հերը, մերը ի՞նչ անում են, չեն անում, տղեն ձենը չի կտրում:

— Ա՛յ որդի, — հարցնում ա Թոսեն, — ի՞նչ ես ուղում, ասա տանք, թաքլի ձենդ կտրես, անկաջներս դինչանա:

— Հավի միս եմ ուղում, — ասում ա տղեն լացակրկնած:

Մերը վեր ա կենում, ինչքամ հավ ուներ՝ քոմմա մորթոտում ա, էլի տղեն ձենը չի կտրում:

— Ախար ի՞նչ ես ուղում, — թագադան հարցնում ա հերը, — հավի միս իր ուղում, մեր հավերը սաղ մորթոտեցինք. հմի՞ ինչ ես ուղում:

— Էս մեր զոնաղի Աքլորի միսը ընշանք շուտեմ, ձենս չեմ կտրի, ի՞նչ ուղում եք՝ ա՛րեք:

Վերջը զոնաղի զահլեն որ էթում ա. — Ա՛յ շանը՝՝ ասում ա, — էդ էրեխին մեռավ լաց ըլնելոն, մի Աքլորի մա՞լիաթն ինչ ա, վե կացեք իմ Աքլորը մորթեք, մե՞ղք ա, բալքի ձենը կտրի:

Զաթի Թոսեն էլ դրան էր բանդ. էն սհաթը տեղիցը վեր ա կենում զոնաղի Աքլորը մորթում ա, նո՞ր որ տղեն ձենը կտրում ա:

— Ա՛յ կնիկ, — ասում ա, — էս լավ էլավ, հազիր ըսենց ազիզ զոնաղ ունենք, էդ հավերիցը մի լավ հարիսա դի՛, ոչերով-ոչեր-հանա մեր զոնաղն ուտի, նոր ճամփա ընկնի:

Կնիկը վեր ա կենում իրանց մորթած հավերը, թագավորի տղի աքլորը դաշանդ թերուում ա, իստկում, լավ փորը-մորը լվանում, լցնում մենծ պղինձը, թունդիրը վառում, հարիսեն դնում վրեն:

<sup>1</sup> Գրառման ձեռագրում՝ դաստախունը. ուղղումը բանահավաքինն է (Ս. 4.):

էն բաշտեն ժամի ձենը որ Քոսի անկաջն ա ընկնում, վեր ա կենում էթում ժամ, չունքի Քոսեն ասսու իրան օրը, ինչքամ էլ որ վռազ բան ունենար՝ առավոտ, իրիկուն պտի ժամ էթար, Քոսեն որ վե կացավ գնաց, թագավորի տղեն էլ վե կացավ, հագնվեց, որ էթա իրա ճամփեն, Վե կացավ տեհավ Քոսեն տանը շի:

— Ա'յ քիր,— ասեց Քոսի կնկանը,— զե ինձ ճա՛ փու դի, էթամ իմ բանին, ես չեմ կարա կենամ, ընշանք Քոսի զալը:

Քոսի կնիկը շատ դեմ կընկնի, թե.— Կա՛ հարիսա ուտենք, ճմի որդիորի ա հազիր կըլնի:

Թագավորի տղեն անկաշ շի անի, կասի.— Պտի էթամ, որ պտի էթամ:

— Բաս որ ըտենց ա, — կասի Քոսի կնիկը,— էթամ մի հակ բերեմ, դի՛ հացիդ մեջը, ճամփին կուտես:

էթում ա, հենց քաֆքիրը հարըսի մեջը տալու բաշտան, սաւանական հենց թագավորի տղի Աքլորն ա դուս դալի. հանում ա մի հացի մեջ կոլողում, բերում տալի թագավորի տղին, թագավորի տղեն Քոսի կնկա հեննա մնաս բարով ա անում, վե կենում ընկնում ճամփա:

Սրան թողանք էթա. գանք խարար տանք Քոսիցը:

Ժամը որ դուս ա գալի, Քոսեն վեր ա կենում, գալի տուն: Դաւիս ա տուն թե չէ, կնկանը հարցնում ա.— Ա'յ կնիկ, մեր զոնաղն ո՞ւր ա, ըլնի<sup>1</sup> գնացել ա:

— Բա ի՞նչ ա արե. ի՞նչ արի, շարի՝ շմնաց, թե՝ վռազ եմ:

— Ճամփի պաշար հո շտվի՞ր:

— Բա ի՞նչ անեի, մեղքը չէ՛ր. էսքամ հավի, աքլորի միշիցը բա մի դադ շտա՛յի:

Քոսեն քաֆքիրը վեր ա ունում, վազում դպա հարըսի պղինձը: Դե՛ս ա քրքրում, դե՛ն ա քրքրում, դե՛ս ա տալի, դե՛ն ա տալի, շատ ա ման գալի, համա թագավորի Աքլորը շի գտնում: Փոր-փոշման թողում ա գալի կնկա կուշտը:

— Վա՛յ, քու տունը շքանդվի, ա՛յ կնիկ,— ասում ա, — դու էդ ի՞նչ օյին հանեցիր<sup>1</sup> իմ գլուխը, — ասում ա, ու յա՛լլա դռնե դուս գլուխն առնում կորչում:

<sup>1</sup> Դրասման ձեռագրում՝ թերիր. ուղղումը բանահավաքին է (Ծ. 4.).

Թող Քոսեն էթա, զանք խաբար տանք թագավորի տղիցը:

Էս տղեն ա՝ էթում ա, էթում ա, շատն ու թիչն աստոծ գիտա, ճամփին մի սառը, քշշան աղբրի ա ուստ գալի: «ԱՌԻ, — ասում ա, — էս աղբրի կշտին նստեմ, մի քիչ հաց-մաց ուտեմ, դինջանամ, նոր վե կինամ ընկնեմ ճամփաս:

Էդ աղբրի զրադին նստում ա, բերում ա դաստախումը բաց անում, որ հաց ուտի: Էն հավի մսիցը ուստում ա, ուստում ա, ուստում ա, ընչանք ճնազը որ ուտում ա, տենում ա, ըհը', ճնազի արանքին մի ժանգոտած Մատանիք: Վեր ա ունում, դնում մատը: Դնելու բաշտան տենում ա էրկու արար, հրես էկան աղաքին կաննեցին:

— Հը', ի՞նչ ես հրամայում, թագավորի ցեղ, — ասեցին արաբները:

Թագավորի տղեն մնաց արմացած, թե էս ի՞նչ բան ա, էս արաբները ո՞րդիան դուս էկան, ըտե ցցվեցին. մի վախտ մնաց 22մած, գլխի վրեն մոլորած, համա բիրդան որ ուզը վրա էկավ<sup>1</sup>, ասեց. — Ինձ տա՞րեք ֆլա՛ն թագավորի երկիրը:

Էն սհաթը արաբները տղին վե կալան, զրին ուաների վրեն՝ յա՛լլա, տարան որդե ասել էր, ընդե վե զրեցին, թուշին գնացին: էդ տղեն էր՝ գնաց, գնաց՝ տեհավ, հրեն մի գեղ ա էրևում, զաթի մութն էլ գետինը կոխել էր; ասեց. «Եթամ տենամ էն գեղումը ի՞նչ կա, ի՞նչ չկա»:

Ճամփա ընկավ դպա էն գեղը: Հասավ էն գեղը, մի քուշա բըռնեց, դուզ գնաց: Գնաց, գնաց, տեհավ՝ հրեն մի պառավ կնիկ քուչի դունը նստած թեշին ձեռին թել ա մանում:

— Բա՛րով, նա՛նի, — ասում ա թագավորի տղեն:

— Ա՛սու բարին, — ա՛յ որդի, — ասում ա պառավը, — էս բե-վախտին ո՞ւր ես էրաւմ<sup>2</sup>, — հարցնում ա:

— Եսի՛մ, նա՛նի, զարիբ, անտեր տղա եմ, էթում եմ էլին Նա՛նի, ինձ տղա չե՞ս շինի, — հարցնում ա թագավորի տղեն:

— Եի՛ չեմ շինի, — ասում ա պառավը, — զաթի ես էլ տղա շունեմ, հրես պառավել եմ, մինը շունեմ, որ պահի ինձ, մուղաթ կե-նա, նեղ օրին հավարիս հասնի, մատիցս փուշ հանի:

<sup>1</sup> Գրառման ձեռագրում՝ խելքը գլուխն էկավ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

<sup>2</sup> Գրառման ձեռագրում՝ որդիա՞ն ես գալի. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

— Թաս որ ըտենց ա, ես քեզ՝ տղա՛, դու ինձ՝ մե՛ր, դա-  
րուկ ե՞ս:

— Դա՛րուկ եմ,— ասում ա պառավը:

Թագավորի տղին աղաք ա անում, տանում տում:

Անց ա կենում ըստենց մի վախտ, մեր ու տղա շատ սիրով  
իրար հեննա յուա ին էթում:

Օրեն մի օրը տղին գալիս ա, մորն ասում.— Նա՛նի ջան, քեզ  
մի բան եմ ուզում ասեմ, չեմ գիտա անկազ կանես, թե չէ:

— Ա՛սա, ա՛յ որդի, — ասում ա պառավը, — ասա անկազ կա-  
նեմ, խի՛ չեմ անկազ անի:

— Ուզում եմ էթաս թագավորի աղջիկն ուզես ինձ, ի՞նչ  
կասես:

— Վա՛յ, ֆո՛զն իմ գլխին, հո չէ՞ս գժվե, ըտենց բան ո՞նց  
կըլիի, մենք քյասիպ, օրեն հացի կարոտ ենք, թագավորը խելքը  
Հո հացի հետ չի կերե՛ քեզ աղջիկ տա, հլա վախում չէ՞ս մեր գըլս-  
ներն էլ կտրի տա, թե խի՛ չնք ձեր ոտը ձեր կարպետնու գյորա  
մեկնում, էն վախտը ի՞նչ կասես:

— Որ չուզես, — ասում ա տղին, — ես էլ գլուխ կառնեմ,  
կկորչեմ:

Սա՞ հա՛, նա՞ չէ՛, սա՞ հա՛, նա՞ չէ՛, սա՞ հա՛, նա՞ չէ՛, տղին  
մորը որ շատ զոտում ա, մերը վեր ա կենում էթում թագավորի  
կուշտը: Դառը-տխուր էթում ա թագավորի խնամաքարի վրեն  
նստում:

Նազիր-վեզիրը պառավին տենալու բաշտան, մոտ են գալի,  
հարցնում.— Հը՛, նա՛նի, խե՛ր ըլնի, խի՛ ես էկե:

— Էկել եմ թագավորի կուշտը, — ասում ա պառավը, — խըն-  
դիրք ունեմ ասելու:

Նազիր-վեզիրը էթում են թագավորին իմաց տալի, թե.— Թա-  
գա՛վորն ապրած կենա, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց մի պառավ ա էկե,  
ուզում ա քեզ տենա. թողա՞նք գա, թե՞ չէ:

— Թողե՞ք գա, — ասում ա թագավորը, — տենանք էդ պառա-  
վը ի՞նչ ա ուզում:

Նազիր-վեզիրը էթում են պառավին աղաք անում, բերում թա-  
գավորի կուշտը: Պառավը ձեռները դոշին դրած՝ թագավորին գլուխ  
ա տալի ընդե կաննում:

— Հը՛, ա՛յ պառավ, ի՞նչ ես ուզում, — հարցնում ա թագա-  
վորը:

— Թագավորն ապրած կենա, — ասում ա պառավը, — մի  
խնդիրք ունեմ, համա էրեսս չի բռնում ասեմ:

— Ա՛սա, բան չկա, ա՛սա տենանք խնդիրքդ ի՞նչ ա:

— Թագավորն ապրած կենա, ես մի տղա ունեմ, էկել եմ  
քու աղջիկը ուզեմ իմ տղին, հմի կտաս՝ դու գիտաս, չես տա՝ էլի  
դու գիտաս, մեր արինը քեզ հալալ ա:

— Կտամ, խի՞ չեմ տա. համա մի բան պտի ուզեմ, թե արե-  
ցիք շատ լավ, թե չէ հո էրկսիդ գլուխն էլ կֆը՛ռու: Ղարո՞ւ ես:

— Ղա՛րու եմ, ասա տենանք, — ասում ա պառավը:

— Մի գշերվա միջին իմ ամարաթի նման պտի ընե՞նց մի  
ամարաթ շինեք, ընե՞նց մի ամարաթ շինեք, որ տենողի բերնի  
ջուրն էթա, որ աղջիկս գա էդ ամարաթի միջին ապրի: Ծինեցիք՝  
լա՛վ, աղջիկս ձեզ հալալ ա, շշինեցիք՝ իմաց կացեք, էրկսիդ գլուխն  
էլ կտրիլ կտամ, իմացա՞ր:

— Իմացա, թագավորն ապրած կենա, — ասում ա պառավը:  
Թագավորին գլուխ ա տալի, թողում դուս գալի, էթում:

Դառը-տխուր, նոթերը կիտած գալիս ա տուն:

— Հը՛, նա՛նի, — հարցնում ա տղեն, — թագավորի կուշտը  
գնա՞ցիր:

— Գնացի, բա ի՞նչ արի, — ասում ա պառավը:

— Է՛, ի՞նչ ասեց թագավորը, — հարցնում ա թաղադան տղին:

— Ի՞նչ ասեմ, որդի, թագավորը ընենց բան ա ուզում, որ  
անելու ճար իլլաջ չկա:

— Մի՛ վախի, նա՛նի, ասա տենանք ի՞նչ ա ուզե, որ դու  
ըգենց դարտոտել ես:

— Ա՛յ որդի, ասելու բա՛ն ա, որ ասեմ. «Մի գշերվա միջին,  
ասում ա, իմ ամարաթի պես մի ամարաթ պտի շինեք, որ իմ աղ-  
ջիկը գա միջին ապրի»: Դե՛ ո՞նց շինենք, ա՛յ որդի, էս ախար ըսկի  
ըլնելու բա՛ն ա:

— Ա՛յ նանի, դու ըսկի դարտ մի անի; դրանից էլ հեշտ բան  
չկա, նենց օրն էգուց<sup>1</sup> թագավորի ամարաթը հազիր կըւնի, դու գնա  
արխեին քու բա՛նին կաց:

<sup>1</sup> Գրառման ձեռագրում այս արտահայտությունը դժվար ընթեռելի է  
(Վ. 4.):

Տղեն կասի, կհանի Մատանիթը կդնի մատը, ալրիալը արարաները կգան:

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ, — կասեն:

Տղեն կասի. — Ըստե էնթա՛վուր ամարաթներ պտի կանացներ. էնթա՛վուր ամարաթներ, որ սաղ աշխարքը ման գառ՝ հատը շգտնվի, մի խոսքով՝ ո՛վ տենա, խելքամաղ ըլնի մնա. մըն էլ որ ամարաթներն ընշանք լիս պտի հազիր ըլնի, իմացա՞ք:

— Աշբներիս վրեն, թագա՛վորի ցեղ, — կասեն արարները ու անէրնոյթը կըլնեն:

Առավոտը գշերով-գշերհանա պառավը կղարթնի, աշքերը բաց կանի, ի՞նչ կտենա՝ թագավորին լայաղ ամարաթների միջին թեք ընկած ա. շորս զիհը մտիկ կտա, կմնա մոլորած, թե էս ո՛րդի ա, և եղճը ըսկի էրազումն էլ չէր տեհն էսթավուր ամարաթներ, ուր մնաց ինքն էլ միշին քնած ըլներ: Թիրդան միտը կընկնի, որ էս քոմմա իրա տղի հոմարն ա, կուրախանա, աշխարռով մին կըլնի:

— Հը՛, նա՛նի, — ձեն կտա էն դհիցը տղեն, — մեր ամարաթներին հավանո՞ւմ ես. դե՛, թե՛զ արա, գնա՛ թագավորի աղջի-կը բե՛:

— Էթամ, ա՛յ որդի, — կասի պառավը, — էս հետ ումուդ ունեմ, որ թագավորն իրա աղջիկը կտա:

Թեղ հագնում ա, էրեսը լվանում, գլուխ-մլուխը կապում, կոկում, զուգում, վե կենում էթում դպա թագավորի ամարաթը, էթում ա դուզ թագավորի խնամաքարի վրեն նստում: Թագավորը փանչարիցը պառավին վարավորդ ա անում, ալրիալը գլմի ա ընկնում, որ իրա աղջկա հավարին ա էկե, շունքի խարարը բերել են, որ պառավի տղեն իրա ուզած ամարաթները շինել ա, հազրե. ամարաթնե՛ր, ամարաթնե՛ր, ամարաթնե՛ր, որ էթում: Թագավորը իրա նազիր-վեղը ին որկում ա, որ էթան պառավին բերեն իրա կուշտը:

Նազիր-վեղիրն էթում են պառավին աղաք անում, բերում թագավորի կուշտը:

— Հը՛, պա՛ռավ, էկա՛ր, — ասում ա թագավորը, — իմ ուզած ամարաթները տղեդ հազրել ա, համա մենակ էդ լի, էլ բան պտի ուզեմ:

— Թագա՛վորը սաղ ըլնի, — ասում ա պառավը, — ասա տեհնամ. է՛լ ինչ ա ուզածդ:

— Մի ընենց մենծ խալիչա պտի հազրեք, որ իմ ամարաթիցը ընշանք ժամը, ժամիցը ընշանք ձեր տունը փռած ըլնի. էս դիճը էն դիճն էլ կանալ ուսի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվլան, աղջկանս քեֆը բերեն, իմացա՞ր:

— Իմացա, թագա'վորն ապրած կենա, խի՞ շիմացա, — ասում ա պառավը:

Թագավորին գլուխ ա տալի, թողում, դուս ա գալի, էթում: Էս պառավն ա՝ էթում ա տուն, էլի դառը-տխուր նստում ա ընշանք տղի գալը: Տղեն գալիս ա տուն, տենում ա էլի մերը նոթերը կիտած նստել ա:

— Ի՞նչ կա, նա՛նի, էլի խի՞ ես ըտենց դարտոտե:

— Է՛հ, ա՛յ որդի, թագավորը հմի էլ ընենց բան ա ուզում, որ ըսկի ըլնելու բան չի:

— Ի՞նչ ա ուզում նա՛նի, ա՛սա տենանք:

— Ընենց մենծ խալիչա ա ուզում, որ իրա ամարաթիցը ընշանք ժամը, ժամիցը ընշանք մեր տունը փռած ըլնի. է՛ս դիճը, է՛ն դիճն էլ ուսի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվլան, աղջիկը գա էդ խալիչի վրովը անց կենա: Դե՛, քեզ եմ հարցնում, ա՛յ որդի. էս ըսկի ըլնելու բա՛ն ա:

— Դու դարս մի անի, նա՛նի, էդ խալիչեն էլ հազիր կանեմ, տենանք սրանից եղը ինչ պտի ուզի:

Տղեն էս ասում ա թե չէ, Մատանիքը հանում ա դնում մատը: Դնելու բաշտան արաբները ալուստի գալիս են ընտե կաննում:

— Ի՞նչ կհրամայես, թագա'վորի ցեղ, — հարցնում են արաբները:

— Զեղանից ընենց մենծ խալիչա եմ ուզում, որ թագավորի ամարաթից ընշանք ժամը, ժամիցը ընշանք մեր տունը փռած ըլնի. է՛ս դիճը, է՛ն դիճն էլ ուսի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվլան. իմացա՞ք:

— Իմացանք, թագա'վորի ցեղ, — ասում են արաբները ու անէրևույթը են ըլնում:

Մթնում ա: Մեր ու տղա թեք են ընկնում արխեին քնում:

Լիսադեմին, բիրդան թագավորի անկաջը մի անուշ բլբլի ձեն ա ընկնում, որ մնում ա հայիլ-մայիլ էլած: Ասում ա. «Ա՛րի մի վե կենամ, տենամ բլբլները էս ո՞րդե են ծլվլացնում»:

Դուս ա գալի, ի՞նչ տենա՝ իրա ամարաթի աղաքին ընե՞նց մի

ճամփա ա սարքած, ընե՞նց մի ճամփա ա սարքած, եքա խալիչեն  
էլ վրեն. է՛ս դիմ, է՛ն դիմ էլ ուսի ծառեր տնկուած, վրեն էլ  
բլրիները ո՞ր շեն ծլվում, կլկացնում, մարդի խելքամաղ են անում,  
թողում. մարդ ասում էր՝ շուտի, լսմի, շհագնի, շմաշի, հենց էդ  
խալիչ վրովը ման դա, բլրիների ձենին անկաջ դնի, էնքա՛մ մի  
սիրում թամաշի բան էր:

«Զէ, — ասում ա թագավորը ինքն իրան, — էս հետ պառավը  
պաի աղջիկս տանի, որ տանի, հմի էլ կաց ընենց մի բան ուզեմ,  
բալքի շկարենա գլուխ բերելք:

Թագավորն ըստե, պառավն ու իրա տղեն էլ ընտե են զարթ-  
նում բլրիների անուշ ձենիցը:

— Հը՛, նա՛նի, — ձեն ա տուլի տղեն, — թագավորի ուզած խա-  
լիչեն ու ճամփեն հազիր ա, դի՛ դնա թագավորի աղջիկը բե՛:

— Էթամ, — ասում ա պառավը ուրախացած:

Վոազ-վոազ հագնում ա, գլուխ-մլուխը կապում, զուզում ու  
յա՛լլա՛ դպա թագավորի ամարաթը: Էթում ա դուզ թագավորի  
խնամաքարի վրեն նստում, Նազիր-վեզիրը նրան որ տենում են,  
էթում են աղաք անում բերում թագավորի կուշտը: Պառավը թա-  
գավորին գլուխ ա տալի, ընտե կաննում:

— Հը՛, պա՛ռավ, — ասում ա թագավորը, — էկար, որ աղջիկը  
տանե՞ս:

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա պառավը:

— Իմ ուզած էրկու բանն էլ հազրել եք, մնացել ա մինը. ըտ  
էլ որ բերեք, իմաց կացեք՝ աղջիկս ձերն ա ու ձերը:

— Ա՛սս, թագա՛վորն ապրած կենա, — ասա տենանք վրա  
իրեքն ի՛նչ ա, — ասում ա պառավը:

— Էս հետ աղջկանս հմար մի ձեռք ընենց շոր պտի բերեք,  
որ ո՛նչ ասեղ կպած ըլնի, ո՛նչ թել, ո՛նչ մկրատ, որ աղջիկս հագ-  
նի էթա ժամ, ընտիան էլ դուզ ձեր տունը, իմացա՛ր:

— Իմացա, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա պառավը,  
թագավորին գլուխ ա տալի, ամարաթիցը դուս գալի, թողում, էթում:  
Պառավը դառը-տխուր գալիս ա տում:

— Հը՛, նա՛նի, — հարցնում ա տղեն, — թագավորն ի՛նչ ասեց:

— Է՛հ, ա՛յ որդի, — ասում ա, — թագավորը էս հետ ընենց  
բան ա ուզում, որ ըսկի գլուխ գալու բան չի:

— Ասա տենամ ի՛նչ ա ուզում, — հարցնում ա տղեն:

— Ասում ա. «Մի ձեռք էնթավուր շոր պտի բերեք աղջկանս հմար, որ ո՞նչ ասեղ դիպած ըլնի, ո՞նչ թել, ո՞նչ մկրատ, ո՞նչ զադ» դե՛ արի ու ըտենց շոր գտի:

— Դու դարտ մի անի, նա՛նի, էդ մի ձեռք շորն էլ կհազրեմ, տենանք եննա ի՛նչ պտի ասի, շտա:

Տղեն կասի, Մատանիթը կհանի կղնի մատը, ալրիալը արաբ-ները կգան:

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ, — կասեն արաբները:

— Մի ընենց ձեռք աղջկա շոր եմ ուզում ձեզանից, որ ո՞նչ ասեղ կպած ըլնի, ո՞նչ թել, ո՞նչ էլ մկրատ, իմացա՞ք:

— Աշքներիս վրեն, — կասեն արաբները ու էն սհաթին կլըթ-վեն, անէրևույթը կըլնեն:

Առավուոց լիսը կրացվի թե չէ, տղեն մորը կասի. — Նա՛նի, դե-վե՛ գնա թագավորի ամարաթը. նրա ուզած մի ձեռք շորը հմի հա-սած կըլնի:

— Լա՛վ, որ ասում ես, կէթամ:

Պառավը էն սհաթը կհագնվի, գլուխ-մլուխը կկապի, կզուգվի, կզարդարվի ու կկըրնկի դպա թագավորի ամարաթը: Կէթա դուզ թա-գավորի խնամաքարի վրեն կնստի: Նազիր-վեզիրը պառավին որ կտենան, կէթան, կկանչեն կրերեն թագավորի կուշտը: Պառավը թագավորին զլուխ կտա, ընտե կկաննի: Կտենա, թագավորի կշտին իրա աղջիկը նստել ա, հագին մի ընենց շոր կա, որ էլ ի՛նչ ասեմ, մարդ շուտի՛, շխմի՛, հենց նրան ու նրա շորերին մտիկ անի, էն-քա՛մ մի սիրումիկ զադ էր:

— Պա՛ռավ, — կասի թագավորը, — հմի որ աղջիկս տարաք, դե գնա՛ տղեդ բե՛, պսակենք:

Պառավը ուրախ-ուրախ վեր ա կենում գալի տուն:

— Ա՛յ որդի, — ասում ա, — թեզ արա վե՛ կաց էթանք, թա-գավորը քեզ կանչում ա, ասում ա. «Թող գա, աղջիկս տամ նրան»,

— Ղո՛րթ, — հարցնում ա տղեն:

— Ղո՛րթ, — ասում ա մերը:

Մեր ու տղա վեր են կենում, գալի թագավորի ամարաթը: Թա-գավորը իրա աղջիկը տալիս ա նրան, օխտն օր, օխտը գշեր հար-սանիք են անում. ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛մ, որ էլ հալ ու հե-սար չկար: Հարսանիթից եղը տղեն թագավորի աղջկանը վեր ա-ռնում, բերում իրա տունը:

Սրանց թողանք ըստե, գանք խարար տանք մեր Քոսիցը: Քոսեն, ախար, իմաստում էր էլե: Թագավորի տղի գլուզվ անց-կացածը քոմմա գիտար, ամեն բան գիտար ու միտք էր անում՝ ո՞նց անի, որ իրա ինադը նրանից հանի, էն հումարով Մատանիքը նրա ձեռիցը խլի:

Օրեն մի օրը մի բոլ ուանգ-ուանգ ուզումքներ, մարշաններ, մարդարտներ ու շուշից շինած ջուսա-ջուսա զադեր ա վեր առնում գալի թագավորի տղի տան աղաքին մի պումուր դուքան ա գնում, որ ծախի: Թագավորի տղի կնիկը, դի ինչքամ լըլնի կնիկ էր էլի, ամեն օր զարավուներին փող էր տալի, էթում էն Քոսի դուքանից ուզումք-մուզումք, մարշաններ առնում, բերում: Մի օր էլ ակուզ-կիցը տենում ա՝ ըսօր դհա լավ-լավ մենծ-մենծ մարշաններ կա Քոսի դուքանումը, ասում ա. «Ես էթամ, իմ ձեռովը լավերը շկեմ, առնեմ»:

Վեր ա կենում գալի Քոսի դուքանը: Քոսեն սրան որ տենում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում:

— Խա՛նում ջան, ի՞նչ ես ուզում, — հարցնում ա Քոսեն,

Թագավորի տղի կնիկը մի քանի հատ մարշան ա չկում, վեր ունում:

— Սրանց գինն ի՞նչ ա, — հարցնում ա Քոսին:

— Զէ՛, խա՛նում ջան, — ասում ա Քոսեն, — էս փողով շեմ տալի:

— Բա ընչո՞վ ես տալի, — հարցում ա,

— Ժանգոտած մատանիքներով, վաղուցվա հին բաներով, թե զէ փող շեմ ուզում, — ասում ա Քոսեն:

— Լա՛վ, — ասում ա թագավորի տղի կնիկը, — զաթի մեր պատըրհանումը մի ժանգոտած Մատանիք կա, յավաշ էթամ բերեմ:

Էթում ա Մատանիքը բերում, տալի Քոսին, մարշաններն առնում, թողում գալի տուն:

Դու մի՛ ասի էդ մատանիքը էն հումարով Մատանիքն ա ըլնում: Քոսեն թիշ ա մնում ուրախությունիցը գժվի. ալրիալը մատանիքը դնում ա մատը: Դնելու բաշտան արարները գալիս են:

— Հը՛, ի՞նչ ես ուզում, Քո՛սա, — հարցնում են արարները:

— էս սհաթը գնացեք թագավորի տղին ու պառավին բերեք զիե դրեք ըստե, ինձ ու նրա կնկանը տարե՛ք ծովի միջի ցամաքը

հանեք, իրա ամարաթներն էլ շալակեք տարեք էդ ցամաքի վրեն վե դրեք, որ մենք էրկուով նրանց միջին ապրենք:

ԷՇ, արաբների ձեռին էս հո դժար բան չեր: Ալրիալը թագավորի տղի ամարաթները վեր են ունում, տանում ծովի միջի ցամաքի վրեն վե դնում, Թոսին ու նրա կնկանը տանում էդ ամարաթների միջին նստացնում, թագավորի տղին ու պառավին էլ վերերում Թոսի դուքանի միջին վե դնում ու թողում էթում իրանց բանին:

Թագավորի տղեն մի վախտ՝ աշբը բաց ա անում, ի՞նչ տենում պառավի հեննա Թոսի դուքանի միջին, թագավորի աղջիկն էլ կըշտին չի:

Ալրիալը զիսի ա ընկնում, թե բանը ընչումն ա. շատ ա գըլխին վա՛յ տալի, լաց ընում՝ էլ ո՞ւր, բանը բանից անց էր կացեւ:

— Նա՛նի, — կասի թագավորի տղեն, — սրանից դենը իմ ապրիլը հարամ ա. դու ըստե կա՛ց, ես էթամ երկրե-երկիր, աշխարեաշխար ման գամ, բալի մի ճար անեմ, իմ ինադը Թոսից հանեմ, նո՞ր որ սիրտս դնշանաւ: Սաղ եղ էկա՝ էլի մեր ու տղա ենք, թե շէ հո՝ աստոծ քեզ հետ:

Ծամփի թագարեք կտենա, պառավի ձեռը կպաշի, իրա Կատուն վե կունի, կընկնի ճամփիա: Կէթա, կէթա, կէթա, մի օր, էրկուօր, իրեք օր, չորս օր, մախլասի՝ մի շարաթ, կհասնի մի գեղ, մութը գետինը կկոխի: Կմննի էդ գեղը, մի տան դուռ կծեծի: Տանտերը կգա, դուռը բաց կանի:

— Ո՞վ ես, — կհարցնի տանտերը, — էս բեկախտին ո՞ւր ես էթում:

— Ծամփորդ եմ, — կասի թագավորի տղեն, — շի՛նի էս գշեր տեղ տաք՝ քնեմ, առավոտը էնբաշտեն էլի վե կենամ, էթամ իմ բանին:

— Խի՛ լինի, դոնաղն ասսում ա, — կասի տանտերը ու նրան աղաք կանի, կտանի նեքսն:

Կրերեն դոշակ կքցեն, դոնաղին վրեն կնստացնեն: Մի քիշ վախտ կանցկենա, կրերեն հաց կքցեն, մի դաստա էլ դագանակ կրերեն. ամենքին մի-մի դագանակ կտան, մեծն էլ կտան դոնաղին: Թագավորի տղեն շատ կզարմանա էս բանի վրեն, կհարցնի. — Էս ինչ բան ա, էս դագանակները խի՛ եք բերեւ:

— Մի քիչ սա՛րը արա, — կասի տանտերը, — եննա կիմանաս,  
թե էս դագանակները ընչի հմար ա:

Թագավորի տղեն սուս կիենա: Հենց կնստեն հացի, մըն էլ  
ի՞նչ կտենա՝ ամեն դհից եթա-եթա մկներ դուս էկան ու մրա տվե-  
ցին հացին: Նրանք էլ դագանակներով տալիս ին մկներին, որ կա-  
յինային մի քիչ հաց ուտի: Մի դհիցը դագանակներն ին վրա բե-  
րում, մի դհիցը հաց ուտում: Թագավորի տղեն էս որ կտենա, ալ-  
բիալը տեղիցը վե կկենա, կէթա իրա խուզջնի բերանը բաց կանի:  
Բաց կանի թե չէ, Կատոն ընտիան դուս կգա: Մկները կատվին  
տենալու բաշտան, քոմմա կփախնեն, մի-մի ծակ կմննեն. ինչ ա՝  
իրանց Կատում լուտի: Տանտերը կմնա զարմացած, թե՝ ի՞նչ թավուր  
զռնաղ ա, որ մկները նրանից վախեցան: Դու մի՛ ասի, սրանց  
երկրում, որ ասես, կատու չիլնում: Մի քանի օր թագավորի տղեն  
սրանց տանը մնում ա, տանտերերը արխեին հաց ին ուտում, մի  
մուկ էլա չէր մոտանում Կատվի ահիցը: Վերջը մկների ճարը ո՛ր  
կտրվում ա, թոփ են ընում, էթում իրանց թագավորի կուշտը  
դանգատ, թե. «Բա չես ասի ըսկ'նց, ըսկ'նց, ըսկ'նց բան, ֆլա՛ն  
թագավորի տղեն էկել ա մեր երկիրը, հետն էլ մի Կատու ա բերե,  
նրա ահիցը չենք կարում բններիցս դուս գանք: Մնացել ենք սո-  
ված, ձեռներս զադ չի ընկնում, որ ուտենք, քիչ ա մնում բիրադի  
սատկուտենք»:

Մկների թագավորը մի զոշաղ մուկ ա չոկում.— Կէթաս,—  
ասում ա, — թագավորի տղի կուշտը, կասես. «Ի՞նչ ուզում ես,  
ա՛սա տանք, թաքլի քու Կատուն առնես ըստիան էթաս»:

Էդ զոշաղ մուկը վեր ա կենում էթում թագավորի տղի կուշտը:

— Թագա՛վորի ցեղը սաղ ըլնի, — ասում ա մուկը, — մեր թա-  
գավորը ասում ա. «Ի՞նչ լեզուդ կպտտի, ա՛սա տամ, թաքլի կա-  
տուդ վեր ունես, մեր երկրիցը քաշվես»:

Թագավորի տղեն ասում ա. — Ֆլա՛ն ժովի միջին մի ամարաթ  
կա, էդ ամարաթի միջին մի քոսա ա կենում, նրա կշտին մի Մա-  
տանիք կա, թե կարաց էդ Մատանիքը բերել տա, Կատուս վե կու-  
նեմ ըստիան կէթամ, թե չէ՛ չեմ էթա:

<sup>1</sup> Այս բառի փոխարեն եղել է՝ մուկը, հավանաբար արտագրելիս բանա-  
հավաքը վրիպել է (Ծ. Կ.):

էդ մուկը խաբարը տանում ա իրանց թագավորին, թե թագավորի տղեն ասում ա. «Ֆլա՛ն ծովի միջին մի քոսա ա ապրում, Քոսի կշտին մի Մատանիք կա, ընչանք էդ Մատանիքը բերել շտաս, էս երկրից շեմ էթա»:

Մկների թագավորը էս որ լսում ա, էն սհաթը մի զոշաղ մուկ ա զրկում էդ Քոսի ամարաթը, որ էթա, ո՞նց որ ըլնի մի ֆանդով էն Մատանիքը գողանա, վեր ունի բերի:

Էդ ղոշաղ մուկն ա՝ վեր ա կենում ընկնում ճամփա դպա Քոսի ամարաթը: Էդ մուկն ա՝ ծովի տակովը փորիլոն, լաղում տալոն կէթա, կէթա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախւասի՝ մի շաբաթ, կհասնի Քոսի ամարաթները, գշեցը տակիցը կփորի, կնիլնի վիրև, կտենա Քոսին քնած ա: Քոսին քնելիս՝ հունարով Մատանիքը զնում էր բերանը ընենց էր քնում, որ լըլնի թե կնիկը գողանա, զնի մատը, արաբները գան, իրան վնասիլ տա: Մուկը դե՛ս, գե՛ն կընկնի, Մատանիքը շի գտնի, վերջը որ շատ ման կգա, վարավուրդ կանի, կտենա, Քոսի բերանումը պահած ա: Բաեղ մի շուշա թունդ քացախ կըլնի դրած, մըն էլ աղաթասով սև տաղտեղ. կէթա պուր կթաթիսի աղաթ քացախի մեջը, եննա սև տաղտեղի մեջը, ա՛ռ Ճա Քոսի պինչը կկոխի: Կոխելու բաշտան Քոսին կփոշտա, Մատանիքը բերնիցը վե կընկնի: Մուկն էլ զաթի դրան էր բանդ. կվերռնի ու յա՛լլա իրա էկած ճամփուը կգա, կհասնի իրանց երկիրը, Մատանիքը կտանի կտա թագավորի տղին: Թագավորի տղեն իրա կատուն վե կունի, էդ գեղիցը դուս կգա, կէթա, կէթա մի դրադ տեղ, Մատանիքը կդնի մատը: Դնելու բաշտան արաբները կգան:

— Ի՞նչ կհամայես, թագավորի ցեղ,— կասեն արաբները:

— Ինձ վե կալեք, տարեք մեր երկիրը:

Արաբները նրան վե կոմեն, կտանեն իրա երկիրը. եննա թագավորի տղեն կասի.— էս սհաթը կէթաք ֆլա՛ն ծովի միջի ամարաթիցը Քոսին վե կունեք, կքցեք ծովը, ամարաթը իրա սարք ու կարգովը, թագավորի աղջկանովը կտանեք կդնեք էլի աղաքվատեղը:

Արաբները ալրիալը թագավորի տղի հրամանը կկատարեն, Քոսին կքցեն ծովը, ամարաթը իրա սարք ու կարգովը, թագավորի աղջկանովը կտանեն կդնեն իրա աղաքվա տեղը:

Թագավորի տղեն կնկանը ո՛ր կտենա, կովախանա, աշխարով մին կըլնի, ուրախություններիցը շեն իմանում ի՛նչ անեն: Նո՛ր

կնստեն ըստե դե'սից, դե'նից կխոսան, զան կասեն, զան կլսեն,  
իրար գլխով անցկացածը իրար նազ կանեն: Պառավի ուրախու-  
թյունին հո հալ ու հեսար շկար: Սրանից դենը մարդ ու կնիկ,  
լավ-լազաթին իրար հեննա սիրով կապրեն ընչանք իրանց մահը:  
Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մու-  
րազին:

